ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Համագործակցային դասը՝որպես արդյունավետ ուսուցման մեթոդ

ԴՊՐՈՑ՝ «ԱրմավիրիN4 ավագ դպրոց»

ՊՈԱԿ ՈՒՍՈՒՑԻՉ Արմինե Դոլինյան

Վերապատրաստող
ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

Արմավիր 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 7
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 12
ԱՄՓՈՓՈՒՄ 19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20
ՀԱՎԵԼՎԱԾ 21

Համագործակցային դասը՝ որպես արդյունավետ ուսուցման մեթոդ

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս
առանց համագործակցության»
Ջեյմս Ուայթսոն

ՆԱԽԱԲԱՆ

Որպես ՀՀ քաղաքացի,որպես հայ մարդ՝ ես մտահոգված եմ իմ հայրենիքի ճակատագրով:Ես հասկանում եմ,որ մեր՝ ռեսուրսներով աղքատ երկրում ամենամեծ հարստությունը մարդկային ռեսուրսն է,գիտական ներուժը, որի ձևավորման պատասխանատվությունը առաջին հերթին կրում է հանրակրթությունը:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում բախվել եմ մի շարք խնդիրների,որոնցից կարող եմ առանձնացնել ամենահիմնականները.

-Աշակերտներին չի հետաքրքրում կարդալը

-Մարել է հետաքրքրությունը առարկայական միջոցառումների նկատմամբ

-Ընկերների հետ անմիջական շփումը փոխարինվել է օնլայն շփման

-Մարել է հարգանքը ուսուցչի և նրա մասնագիտության նկատմամբ

-Մարել է հետաքրքրությունը ուսման նկատմամբ

Այստեղ ուզում եմ կանգ առնել դրանցից ամենացավոտ խնդրի վրա.ինչու՞ է դպրոցականների մեծամասնության մեջ մարել սովորելու ցանկությունը:

Ի՞նչ անել,ինչպե՞ս վարվել,երբ երեխան չի ուզում սովորել:Ինչպե՞ս օգնել երեխային մոտիվացիա գտնել,կամ ինչպես սովորեցնել նրան սովորել:Հեշտ չէ այս հարցերի պատասխանը տալ,որովհետև երեխաները տարբեր են:Մեկը չի ուզում սովորել,որովհետև հանդիպել է դժվարությունների և հետ է մնացել ուսման մեջ,այլևս չի կարողանում հաղթահարել դժվարությունները,մյուսը այլ երեխաների հետ հարաբերությունների մեջ դժվարություններ ունի,մյուսը մոտիվացիայի խնդիր ունի և այլն:Կան նաև սուբեկտիվ պատճառներներ: Հատկապես տղաները հաճախ են ասում. ինչո՞ւ եմ սովորում, եթե բազմաթիվ մարդիկ, առանց կրթություն ունենալու, հարստանում են և պաշտոններ ստանում: Ազդեցիկ պաշտոններում հայտնված, հարստացած, բայց ցածր կրթական ցենզ ունեցող մարդիկ շատ բացասական

ազդեցություն ունեն երեխաների սովորելու մոտիվացիայի վրա՝ դառնալով սխալ օրինակ:

Իմ կարծիքով կրթական բարեփոխումները միշտ մի քայլ հետ են մնում,մինչ աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքներն են ձևավորում մեր աշխարհայացքը: Այն, ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ սխալ:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն՝ գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Այդ առումով լայն հնարավորություն է տալիս համագործակցային ուսուցման կիրառությունը դասապրոցեսում:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակների հասնելու համար:Դրանք են ՝

-նպաստել կրթության որակին

-սովորողների ակտիվության բարձրացմանը

-միջանձնային հարաբերությունների ձևավորմանը

-մշակույթի ձևավորմանը

-ուսուցման գործընթացը ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն

Համագործակցային ուսուցումը ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ

վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հավասար հնարավորություններ: Այն թույլ է տալիս ուսուցչին՝ լուծելու սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի թիմ, ուր հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Մասնավորապես սովորողներն իրենց ավելի ազատ և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ:Սովորողները համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝հայտնագործելով գիտելիքը և կիրառելով այն: Համագործակցային ուսուցումը ուսուցչին առաջադրում է որակապես նոր և ավելի բարձր խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ.: Գիտելիքի մատուցմանն ու վերարտադրման ստուգմանը փոխարինելու են գալիս ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների համագործակցային հմտությունների ուսուցման նոր մոտեցումները: Խիստ արդիական են դառնում ինչ և ինչպես սովորեցնել հարցերը:

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝

- հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,
- որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,
- նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,
- ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,
- ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,
- որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Աշխատանքս նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը,

ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Այս նպատակին հասնելու համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները.

-Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն և դիտարկել նրանցում արծարծված հիմնական մոտեցումները
-Ուսումնասիրել համագործակցային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները

-Համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Հին հույն փիլիսոփա Աննեյ Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝

-սոցիալական փոխկախվածություն

-,ճանաչողության զարգացման,

- վարքագծային ուսումնառություն:

Սոցիալական փոխկախվածության տեսության ներկայացուցիչները դիտում են խումբը որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. Խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության:

Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունների հիմքում ներառում են՝Պիաժեի և Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում

որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու,մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝հիմնվելով ոչ թե ինչ սովորեու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին <<Սոցիալական փոխկապվածության>> տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկապվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա: Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ/ առաջադրանքը՝ որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Դոկտոր Սպենսեր Կագանի «Համագործակցային ուսուցում» աշխատությունը հրապարակվել է 1985 թվականին (Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ. Kagan Publishing): Այս գիրքը համագործակցային ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է: Այն չի առնչվում որևէ այլ մեթոդի. դրանում ներկայացված մեթոդը հայտնի է որպես Կագանի մեթոդ: Այն մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում ըստ աշակերտների կարողությունների: Կագանի մեթոդի հիմքում դրված է համագործակցության գաղափարը, և այդ մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները:

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Ըստ Ջոնսոնների՝ մեկ տարվա ընթացքում անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն՝ համագործակցային , անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում, բոլոր տնտեսական, տարիքային, ազգային միջավայրերում: Հետազոտությունների հիման վրա Ջոնսոնները և Հոլուբեկը առանձնացնում են երեք արդյունքներ.

ա) բարձր առաջադիմություն և արդյունավետություն

բ) ավելի աջակցող և նվիրված հարաբերություններ

գ) հոգեբանական առողջության, բանիմացության ու ինքնարժևորման ավելի բարձրաստիճան դրսևորումներ:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

1. Անձի զարգացումը և անհատականության ձևավորումը
2. Հոգեբանական և ֆիզիկական ապահովումը
3. Սթրեսի հաղթահարումը
4. Շրջապատողների հետ փոխհարաբերությունների կառուցումը

Համագործակցային ուսուցումը ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն, ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հավասար հնարավորություններ: Այն թույլ է տալիս ուսուցչին՝ լուծելու բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի թիմ, ուր հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Մասնավորապես սովորողներն իրենց ավելի ազատ և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում,

Համագործակցային ուսուցման առաջադրանքները պատրաստելիս ուսուցիչը պետք է հետևի երեք հիմնական պայմանների.

ա) խմբի բոլոր անդամները պետք է ունենան մասնակցելու դրդապատճառներ,

բ) առաջադրանքը պետք է խմբի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն ընձեռի ,

գ) խմբի անդամները պետք է առաջադրանքը կատարելիս ընտրություն կատարեն և որոշում ընդունեն :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ և ես կհիշեմ,
ներգրավիր ինձ և ես կսովորեմ:
Չինական առած

Ուզում եմ մեջբերել Բ.Ք. Սքիների խոսքերը.«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ:Այն պահից ի վեր,երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդներ,կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը»:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում դասավանդել եմ և՛ ավանդական, և՛ նոր մեթոդներով:Նոր մեթոդ ասելը այնքան էլ ճիշտ արտահայտություն չէ,որովհետև համաձայն եմ այն մտքի հետ,որ դասավանդման մեթոդները չունեն վաղեմության ժամկետ:Բոլոր նորագույն մեթոդների արմատները գտնվում են անցյալում:Իհարկե, չհաշված համակարգիչների և այլ տեղեկատվական միջոցների կիրառմամբ մեթոդները:

Սակայն փոխվել է աշխարհը,փոխվել են մարդիկ,փոխվել են սովորողները,նրանց ցանկությունները,պահանջները,վերաբերմունքը կրթության նկատմամբ:

Իմ դասավանդման ընթացքում վերջերս հանդիպել եմ նաև մի բացասական երևույթի:Գյուղական դպրոցների բարձր դասարաններում սովորողները մտածում են այսպես. «Ինչու՞ սովորեմ,եթե պիտի տարիներ հետո փող վաստակեմ. կգնամ բանվորություն կանեմ,փող կաշխատեմ»: Այս դեպքում սիրում եմ օգտագործել Սերոբ Խաչատչյանի կողմից կիրառած մի հետաքրքիր նկար: Նկարում պատկերված է խոր և մութ մի փոս,հատակում՝կծկված տղա.նա մրսում է:Վերևից փայտե աստիճան է կախված: Տղան աստիճանով վեր բարձրանալու փոխարեն գերադասում է տաքանալու համար վառել աստիճանը:Նկարի տղային համեմատում եմ կարճաժամկետ հաջողության ձգտող սովորողների հետ:Նմանությունը ակնհայտ է,սա հասկանում են նաև սովորողները:

Այս հոգեբանությամբ երեխաների հետ պետք է հատուկ աշխատանքներ տանել. չէ՞ որ ուսուցիչը ոչ միայն ուսուցանող է ,այլև դաստիարակող: Պետք է երեխաներին բացատրել, համոզել, որ կրթությունը շատ ավելի մնայուն կապիտալ է, քան նյութական հարստությունը: Ի վերջո, ցանկացած պահի կարող ես զրկվել նյութական

հարստությունից, պաշտոնից, բայց կրթական կապիտալը ոչ ոք չի կարող խլել քեզանից։

Սովորողների ներգրավվածությունը ուսման գործընթացին և ուսման որակը բարձրացնելու շատ մեթոդներ կան։

Իմ դասավանդած 9-րդ դասարանում սովորում են 9 աղջիկ և 16 տղա։

Դասարանում աշակերտների ուշադրության կենտրոնացման և ներգրավ-վածության խնդիր կա։ Ես դա կապում եմ առաջին հերթին աղջիկների սակավաթվության, ընտանեկան,սոցիալական պայմանների և այլ օբեկտիվ ու սուբեկտիվ պատճառների հետ։

Ի՞նչ անել,ինչպե՞ս վարել դասը,ի՞նչ գործիքներով,ի՞նչ մեթոդներով,որպեսզի նախ՝ կարողանամ գրավել երեխաների ուշադրությունը,ապա նաև նրանց ներգրավեմ աշխատանքի մեջ և կրթության որակ ապահովեմ։։Այստեղ ինձ օգնության են հասնում համագործակցային ուսուցման մեթոդները։Ընդգրկելով սովորողներին խմբա_ յին աշխատանքներում՝ հնարավորություն եմ տալիս նրանց աննկատ ներգրավվել ուսումնական պրոցեսում, դատողություններ անել,վերլուծություններ կատարել։ Իսկ առավել թույլ ընդունակություններով աշակերտներն էլ դարձյալ աննկատ, ընկերների օգնությամբ կարողանում են որոշակի չափով մասնակից լինել դասին։ Խիստ կարևոր է համագործակցային սկզբունքների պահպանումը, որովհետև առանց դրա համագործակցություն չի ստացվի։Այդ սկզբունքներն են.

(Սպենսեր Կագանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝

-ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ։ Յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում։

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար։ Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին։ Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման

մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար։

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն։

դ) Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների։ Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով։

Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի իմ խնդիրն է համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին:

Իմ աշխատանքային պրակտիկայում հաճախ եմ կիրառում խթանող տարբեր միջոցներ՝ զույգերով աշխատանքը, «Շրջվիր դեպի զույգդ» , «Պրիզմա», հարցա-դրումներ,մտագրոհ,քառաբաժան և այլ մեթոդները:

Իհարկե, միանգամից, մի դասի ժամանակ չես կարող և պետք էլ չէ օգտագործել մի քանի մեթոդ: Պետք է որոշակի դասի համար կատարվի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի ընտրության հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,

- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,

Իմ դասավանդման ընթացքում հաճախ եմ կիրառում «Երեք բանալի և մեկ կողպեք» գործիքը՝ հատկապես ակնարկային կամ ծավալուն թեմաներ անցնելու ժամանակ՝ որպես տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով, խմբով կամ անհատական:

«Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը ճկուն կիրառություն ունի,այն կիրառում եմ և՛ նոր նյութի հաղորդման փուլում,և՛երբեմն էլ նյութի ամփոփման փուլում: Մեթոդի էությունը հետևյալն է. ուսուցչի կողմից առաջադրված ելակետային հարցադրման պատասխանը գտնելու համար տրվում են տվյալ գրական երկի բովանդակությունից բխող բնորոշումներ, ուղղորդող, հուշող, տվյալ հարցը ինչ-որ չափով ամբողջացնող բնութագրումներ, որոնք այն բանալիներն են, որոնց օգնությամբ պետք է բացվի կողպեքը՝ հիմնական հարցադրումը: Կիրառվող բանալիների թիվը պայմանական է. այն կարող է լինել երեք և ավելի, ու կախված է ուսուցանվող նյութի ծավալից, հարցադրման բովանդակությունից, աշակերտների իմացական մակարդակից: Վերոնշյալ մեթոդը կիրառում եմ տարբեր մոտեցումներով՝ պայմանավորված աշակերտների տարիքային խմբերով և ուսուցանվող նյութով:

Աշակերտներին առաջարկում եմ դասից դուրս գրել երեք նախադասություն կամ երեք պարբերություն,եթե նյութը ծավալուն է (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն կամ պարբերություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Անհատական աշխատանք հանձնարարելիս աշակերտները պետք է ուշադիր կարդան բնագիրը և ընտրեն երեք արտահայտություն կամ նախադասություն, որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար: Բնականաբար տարբեր աշակերտներ կընտրեն տարբեր բանալիներ և կողպեքներ: Այնուհետև նրանց հնարավորություն է տրվում իրենց առանձնացրած բանալիները և կողպեքը համեմատել իրենց զույգի

հետ կամ խմբում և գտնել բոլորի համար ընդունելի տարբերակ: Խմբի ներսում, եթե կա տարակարծություն, նրանք պետք է ընտրեն ավելի հիմնավորված տարբերակը: Խմբային աշխատանքից հետո յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ ներկայացնում է իրենց խմբի կողմից ընտրված բանալիներ և կողպեքը: Կլինեն սովորողներ, որոնք համաձայն չեն լինի զույգի ներկայացրած բանալիներին և կողպեքին: Այս աշակերտին կամ աշակերտներին ևս պետք է հնարավորություն տալ արտահայտելու իր կարծիքը: Ոչ մի սովորողի կարծիք ուշադրությունից դուրս չպետք է մնա:

Կներկայացնեկ իմ փորձը 9-րդ դասարանում,որտեղ սովորում է 25 աշակերտ:Դասի թեման՝«Մեսրոպ Մաշտոց»:

Դասի սկզբում հանձնարարում եմ լրացնել ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները՝ ճշտելու համար սովորողների նախնական գիտելիքները թեմայից:

Գրատախտակին գրում եմ մեթոդի անունը՝«Երեք բանալի և մեկ կողպեք» և բացատրում աշխատելու ընթացքը.

՝-Հրահանգում եմ աշակերտներին հաշվել Ա-ից Ե և միևնույն համարների միավորումով ձևավորել համապատասխան թվով խմբեր:

¬ Խմբերին բաժանում եմ ուսումնասիրման ենթակա նյութերը՝

Ա խումբ – Հայ ժողովուրդը և հայոց գիրը (էջ 6),

Բ խումբ – Նախամաշտոցյան գիր (էջ 6-8),

Գ խումբ – Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը(էջ 9-11),

Դ խումբ – Հայոց այբուբենի գաղտնիքները (էջ 11-13)

Ե խումբ – Մաշտոցի շարականները(էջ 13-15):

Խմբերը պետք է նախ անհատապես ուսումնասիրեն հանձնարարված հատվածը, քննարկեն, որպես «բանալիներ» դուրս բերեն տվյալ հատվածի հիմնական բովանդակությունն արտահայտող երեք նախադասություն /անհրաժեշտության դեպքում՝պարբերություն/ և ձևակերպեն մեկ ամփոփիչ միտք, որը կհանդիսանա խմբի «կողպեք»-ը :

- Ներկայացնում եմ գնահատման չափանիշները: Խմբերը կգնահատվեն ըստ իրենց նախընտրած ներկայացման ձևի (արձակ շարադրում, բացատրություն, քարտեզագրում կամ որևէ սխեմայի, պաստառի ներկայացում, օրինակ, կողպեքի ու

բանալիների նկարների տեսքով և այլն), բանավոր խոսքի հստակության, ուսանելիության, տրամաբանական հաջորդականության, ժամանակի ռացիոնալ օգտագործման և այլն:

¬ Տրվում է աշխատանքի կատարման ժամանակ:

Ընտրված աշակերտները նշում են հատվածի ենթավերնագիրը, , ամբողջացնում են հատվածի բովանդակությունը և շեշտադրում են հատվածի գաղափարական հարցադրումները՝ ինչ դեր ունի գիրը հայ ժողովրդի կյանքում,ինչպես կբնութագրեն Մաշտոցի տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ,ինչպես են գնահատում հայոց գրերի պատմական նշանակությունը և այլն:

Այս աշխատանքից հետո երբեմն խմբերի ներկայացրած հատվածների յուրացման աստիճանը ճշտելու համար սովորողներին հանձնարարում եմ ողջ դասին վերաբերող հայտորոշիչ թեստային առաջադրանք/հավելված 1/

Արդյունքները կբացահայտեն նաև խմբերից յուրաքանչյուրի համագործակցային աշխատանքը և ներկայացման որակը, ինչի հիման վրա կկատարվի խմբերի կամ անհատների գնահատում:

Գնահատում եմ ինչպես միավորային,այնպես էլ ձևավորող գնահատականներով / կարելի է ժպտացող,լացող, տարակուսած սմայլիկներով/

Բնականաբար առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և աշակերտների կողմից այն օգտագործելու արյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար դրա բազմակի կիրառությունը:

Աշխատանքիս զարգացման ընթացքը արդյունավետ կարգավորելու համար երբեմն օգտագործել եմ ինքնագնահատման աղյուսակ, որտեղ յուրաքանչյուր փորձից հետո գրանցել եմ տվյալ դասի հաջողություններն ու թերությունները: Դրանց վերլուծության արդյունքում հնարավորություն ես ունենում գտնելու թերությունները շտկելու, կատարելագործելու ուղիներ և շարունակաբար կրկնելու դեպքում հասնել մեթոդի կիրառման առավել արդյունավետության: Աղյուսակը ունի հետևյալ տեսքը:

Ուսուցչի աշխատանքի գնահատման չափանիշներ	Դասերի հերթական համարները			
	1	2	3	4
Խմբերի համասեռությունը				
Խմբում անդամների համագործակցության աստիճանը				
Խմբում իշխող աշակերտ(ներ)ի առկայությունը				
Առաջադրանքների ձևակերպման հստակությունը				
Առաջադրանքների համապատասխանությունը մեթոդին, թեմային ու խմբերին				
Ժամանակի իրատեսական բաշխումը				

Այսպիսով՝ «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառումը 9-րդ դասարանում «Մեսրոպ Մաշտոց» թեման ուսումնասիրելիս նպաստեց իմ նպատակի իրականացմանը.ապահովեցի բոլոր սովորողների մասնակցությունը,համագործակցությունը, ուսուցանվող նյութի առավել խորքային իմացությունը: Աշակերտները կարողացան ամբողջական նյութը ելակետային հարցադրումներով տարանջատել և դրանց միջոցով ձեռք բերել խորքային գիտելիքներ: Նպաստեց նրանց վերլուծական մտածողության և հետաքրքիր եզրահանգումներ կատարելու կարողության զարգացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Ոսումնասիրեով հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն, դիտարկելով նրանցում արծարծված հիմնական մոտեցումները,ուսումնասիրե-
լով համագործակցային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները՝ ես
ավելի ու ավելի համոզվեցի ,որ համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու,սովորողների ներգրավվածությունը դասին ապահովելու,միջանձնային հարաբերությունները կարգավորելու,
տրամաբանական և վերլուծական մտածողությունը զարգացնելու գործում,
ինչը կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է : ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:Ուստի ուսուցիչը միշտ պետք է զբաղվի ինքնակրթությամբ,հարստացնի իր գիտելիքները,մեթոդական զինանոցը և երբեք չբավարարվի իմացածով: Միայն այդ դեպքում՝ուսուցչի և աշակերտի

համատեղ նպատակաուղղված գործունեության արդյունքում հանրակրթությունը կիրագործի իր առջև դրված նպատակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

3. Համագործակցության մանկավարժություն (Վ.Շատալով, Մ.Շչետինին, Ն.Գուզիկ, Ս.Լիսենկովա)

5. Սպենսեր Կագան https://ru.sainte-anastasie.org/articles/psicologia/spencer-kagan-y-el-trabajo-cooperativo-estructurado.html

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայտորոշիչ թեստ 9-րդ դասարան

Թեման- Մեսրոպ Մաշտոց

Առաջադրանքների քանակը- 10

1. Ո՞րը հնագույն ժամանակաշրջանի գրանշան չի.

1.պատկերագիր 2.սեպագիր 3.թռչնագիր

2. Նշվածներից ո՞վ կապ չունի գրերի գյուտի հետ.

1.Վռամշապուհ 2.Սահակ Պարթև 3.Մովսես Խորենացի

3. Ո՞ր հայտնի լեզվաբաններն են ժխտում նախամաշտոցյան գրերի առկայությունը.

/նշիր երկու լեզվաբանի անուն/

---

4. Ո՞ր օտար պատմիչն է վկայություններ թողել հայոց գրերի գոյության մասին.

1.Հոպոլիտոսը 2 Հերոդոտոս 3.Պլուտարքոս

5. Ո՞վ է Մաշտոցի կյանքն ու գործը անմահացրել.

1.Խորենացին 2.Կորյունը 3.Ղազար Փարպեցի

6. Ո՞վ Մաշտոցի աշակերտներից չէ.

1.Խորենացին 2.Եղիշեն 3.Կիրակոս Գանձակեցին

7. Քանի՞ տառ է ստեղծել Մաշտոցը

1.39 2.38 3.36

8. Ո՞վ էր առաջարկում Մաշտոցին թաղել Օշականում.

1. Սահակ Պարթև

2. Վահան Ամատունի

3. Դավթակ Քերթող

9. Ե՞րբ է կատարվում շարականը.

---

10. Ինչո՞ւ են Մաշտոցին բնորոշում որպես 2-րդ լուսավորիչ.

_____

_____